ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

12 մարտի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

27
(3236)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ ՀԵՌԱԽՈՍ ԵՆ ԳՆԵԼ

Լոռու մարզպետի աշխատակազմը 2025 թվականի մայիսի 29-ին պետական միջոցներով ձեռք է բերել թանկարժեք բջջային հեռախոս՝ 467,900 դրամ արժողությամբ: Խոսքը վերաբերում է Apple iPhone 16 Pro (128GB, Desert Titanium) մոդելին, որը գնվել է մեկ հատով: «Ժողովուրդ» օրաթերթի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ գնումը կատարվել է «Մոբայլ Սենթր Արթ» ՍՊԸ-ից, եւ դրա վերաբերյալ առկա է համապատասխան հաշիվ-ապրանքագիրը: Սակայն ուշագրավ է, որ պաշտոնական փաստաթղթերում չի նշվում, թե կոնկրետ ում համար է ձեռք բերվել այդ հեռախոսը, եւ պետության որ կարիքներից դրդված է մարզպետարանը աղքատության մեջ գտնվող այդ մարզում նման շռայլություն թույլ տվել: Եւ բնական հարց է առաջանում. պետական միջոցներով գնված գրեթե կես միլիոն դրամ արժողությամբ հեռախոսը ո՞ւմ համար է նախատեսված եղել: Փաստաթղթերում շահառու անձի կամ ստորաբաժանման բացակայությունը հարցեր է առաջացնում նաեւ թափանցիկության տեսանկյունից: Պետական կառույցներում տեխնիկայի նման գնումների դեպքում պետք է գրել օգտագործման նպատակը կամ այն պաշտոնյան, ում համար նախատեսված է սարքը: Այս դեպքում, սակայն, այդ տեղեկությունը բացակայում է:

Միաժամանակ պետք է նշել, որ iPhone 16 Pro մոդելը թողարկվել է 2024 թվականին եւ համարվում է Apple-ի նոր սերնդի սմարթֆոններից մեկը: Հետեւաբար, խոսքը վերաբերում է համեմատաբար թանկ եւ նոր տեխնիկայի:

Գործարքի մյուս ուշագրավ կողմը մատակարար ընկերությունն է: Հեռախոսը գնվել է «Մոբայլ Սենթր Արթ» ՍՊԸ-ից, որը Հայաստանի 2-րդ խոշոր հարկատու ընկերությունն է, որը պատկանում է գործարար Արթուր Պետրոսյանին, որը նախկինում եղել է Երեւանի ավագանու Հայաստանի Հանրապետական կուսակցության խմբակցության անդամ:

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը 2025 թվականի դեկտեմբերի 11-ին հայտարարել էր, որ դատախազությունը մեկնարկել է Սեւանա լճի ափամերձ տարածքներում օրենքի խախտմամբ օտարված կամ վարձակալության հանձնված գույքերը պետությանը վերադարձնելու աշխատանքները: Գլխավոր դատախազը նաեւ տեղեկացրել էր, որ դատախազության կողմից մի շարք գույքերի վերաբերյալ հայցեր են ներկայացվել դատարան, որոնց թվում էին նաեւ՝ «Հարսնաքար» հյուրանոցի վարչական համալիրը (Սեւան քաղաքի Երեւանյան խճուղի 50 հասցե), «Հարսնաքար» հյուրանոցի քոթեջները (Սեւան քաղաքի Երեւանյան խճուղի 48/6 հասցե), Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախկին նախագահ, ՀՀ Ազգային Ժողովի նախկին պատգամավոր Ռուբեն Հայրապետյանի կողմից ապօրինի կառուցված Սեւանի առանձնատունը (Սեւան քաղաքի Հանգստի գոտի 3-րդ փողոց 38 հասցե): Վերոնշյալ երեք հայցերն ընդունվել են դատարանի վարույթ:

⇨ էջ 4

2025 թվականի սեպտեմբերի 12-ին Արսեն Ղարիբյանը նշանակվել է Լոռու մարզպետի տեղակալ: Մինչ այդ նա երկար տարիներ աշխատել է ջրօգտագործողների համակարգում եւ տեղական ինքնակառավարման մարմիններում: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է պաշտոնյայի կենսագրությունն ու ներկայացրած հայտարարագիրը՝ հասկանալու համար, թե ինչ գույք, եկամուտներ եւ ֆինանսական պարտավորություններ ունի Լոռու փոխմարզպետը: Ղարիբյանի աշխատանքային գործունեությունը սկսվել է կրթության ոլորտում: 2009-2015 թվականներին նա աշխատել է Օձունի թիվ 2 միջնակարգ դպրոցում՝ որպես զինղեկ, ֆիզկուլտուրայի եւ շախմատի ուսուցիչ: 2015-2017 թվականներին զբաղեցրել է «Լոռու ջրանցք» ջրօգտագործողների ընկերության գործադիր տնօրենի պաշտոնը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Քրեակատարողական ծառայությունը հետեւողականորեն շարունակում է իրականացնել համալիր միջոցառումներ՝ ուղղված քրեակատարողական հիմնարկներ թմրամիջոցների եւ արգելված իրերի ներթափանցման, ինչպես նաեւ ազատազրկված անձանց կողմից դրանց պահման եւ ապօրինի շրջանառության կանխարգելմանն ու բացահայտմանը: 2026 թվականի փետրվարին Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության տարածքային բաժինների, քրեակատարողական հիմնարկների անվտանգության եւ պահպանության ապահովման ստորաբաժանումների ծառայողների կողմից իրականացված միջոցառումների արդյունքում հայտնաբերվել են՝ 22,9 գրամ թմրամիջոցների նմանվող զանգվածներ, 146 բջջային հեռախոս, 198 բջջային հեռախոսի պարագա, 6 wi-fi սարք, 12 կտրող-ծակող առարկա, 66 լիտր ինքնաշեն ոգելից խմիչք եւ արգելված այլ իրեր: Բոլոր դեպքերով նախաձեռնվել են քրեական, վարչական եւ կարգապահական վարույթներ, նշանակվել են դատաքիմիական փորձաքննություններ: Քրեակատարողական ծառայությունը կրկին հորդորում է քաղաքացիներին խստորեն պահպանել քրեակատարողական հիմնարկներ այցելելու՝ օրենքով սահմանված պահանջները եւ զերծ մնալ անօրինական գործողություններից:

ԶՐՈՒՅՑ

«ԵՍ ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՄ ՈՒՆԵՑԵԼ ՁԱՅՆ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ»

ArmLur.am-ի զրուցակիցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից կարգալույծ հռչակված քահանա, Թալինի Բազմաբերդ համայնքում հոգեւոր ծառայություն իրականացնող Տեր Թադեւ Թախմազյանն է:

Տեւական ժամանակ է, ինչ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայցադիմում է ներկայացրել դատարան՝ ընդդեմ կարգալույծ հռչակված քահանա Տեր Թադեի (Արամայիս Թախմազյան): Մայր Աթոռը դատարանից պահանջել է պարտավորեցնել կարգալույծ քահանային վերադարձնել Եկեղեցուն սեփականության իրավունքով պատկանող Արագածոտնի մարզի Թալին քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցու բանալիները, դրանով իսկ արգելել նրան մուտք գործել եկեղեցու խորան, ավանդատուն եւ ատյան: Մայր Աթոռը պահանջել էր նաեւ պարտավորեցնել Տեր Թադեին Մայր Աթոռի կողմից նրան հատկացված բնակարանը վերադարձնել:

Այս ամենին զուգահեռ՝ փետրվարի 5-ին կարգալույծ հռչակված քահանաներ Տեր Թադեն եւ Տեր Արամը հայց էին ներկայացրել դատարան՝ պահանջելով Մայր Աթոռին պարտավորեցնել վերականգնել իրենց հոգեւոր ծառայության պաշտոնները: Կրկնակի հայց ուղարկելուց հետո Տեր Թադեն ArmLur.am-ի հետ զրույցում նշել էր, որ դատարանը որոշել է պարտավորեցնել Մայր Աթոռին՝ ամբողջությամբ եւ անխոչընդոտ ապահովել ե՛ւ իր, ե՛ւ Տեր Արամի հոգեւոր ծառայության պաշտոնները:

-Ի՞նչ փուլում են այս պահին դատարան ներկայացված հայցերը: Դուք պատրաստվո՞ւմ եք հանձնել եկեղեցու բանալիները եւ բնակարանը:

-Այն հանգամանքը, որ արդեն դատարանը պարտավորեցրել է պաշտոնի վերականգնում, դա ինքնին լուծում է բնակարանի հարցը:

-Այլ քայլերի չե՞ք դիմելու:

-Ես ի՞նչ պիտի անեմ: Ես իմ ծառայությունն եմ իրականացնում, որը դեռեւս ունի որոշակի խոչընդոտներ: Գործընթացներ են ընթանում, որոնց շրջանակում առայժմ որեւէ վերջնական արդյունք չկա:

-Այս ողջ ընթացքում Դուք դիմել եք Մայր Աթոռին: Գուցե ավելի ճիշտ կլինի երկկողմ, առանց դատարանի քննարկում ունենաք:

-Ես ոչ: Ես, անկեղծ, չեմ դիմել:

-Իսկ Մայր Աթոռից եղե՞լ է առաջարկ:

-Ո՛չ, բայց ես պատրաստ եմ էլի, որովհետեւ ինձ համար իմ կարգալուծությունը մի տեսակ շատ անհասկանալի էր: Այսինքն՝ ես բողոքի ձայն էի բարձրացրել, ու, վստահաբար, բողոքի ձայնին այդ ձեւ չեն արձագանքում՝ միանգամից Եկեղեցուց հանել: Ինձ համար մի քիչ սա տարօրինակ էր. ինչո՞ւ այդ սկզբունքը կամ մոտեցումը որդեգրեցին Մայր Աթոռում: Ի վերջո, ես անհատ, երիտասարդ քահանա էի, իսկ իրենք տարեց, բարձրաստիճան, ավելի փորձառու, ինձ համար սա շատ տարօրինակ էր: Ես որեւէ անձի ո՛չ վիրավորել էի, ո՛չ անձի շեշտադրել էի, ո՛չ թիրախավորել էի: Ես ասել էի այն, ինչը բոլոր եկեղեցականներն ասում էին, բայց ես համարձակություն եմ ունեցել ձայն բարձրացնել: Ինչո՞ւ գնացին այդ սկզբունքով, ինձ համար տարօրինակ էր:

-Կարծում եք՝ շտապե՞լ է Մայր Աթոռը Ձեզ կարգալույծ հռչակելու հարցում:

-Այո՛, կարծում եմ՝ շտապել են: Ճիշտ է, գրել են եւ հիմա էլ կտան բացատրություն, թե ինչու կարգալույծ արեցին, բայց կարծում եմ՝ դա բավարար չէր, էլի, թեկուզ մարդկային առումով: Համոզիչ չէր:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԱԺ ԿԳՆԱՆ

Armlur.am-ի տեղեկություններով՝ մարտի 19-ին խորհրդարան կգնան ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը եւ ՀՀ արդարադատության նախարար Մրքուհի Գալյանը:

Մենք տեղեկացանք, որ նախարարները պետք է ներկայացնեն ՀՀ կառավարության 2025 թվականի բյուջեի կատարողականը:

Անդրեասյանն ու Գալյանը զեկույցը ներկայացնելու են ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովում: Հիշեցնենք՝ գրել էինք նաեւ, որ մարտի 20-ին ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովում ուժային կառույցների գլխավորությամբ նիստ է սպասվում:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՊՆ հանձնաժողով են գնալու ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը, ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանը, ՀՀ ԱԱԾ տնօրեն Անդրանիկ Սիմոնյանը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանը, ՀՀ արտաքին հետախուզության ծառայության պետ Քրիստինե Գրիգորյանը: Կառավարության ներկայացուցիչները խորհրդարանին ներկայացնելու են Կառավարության ծրագրի 2025 թվականի բյուջեի կատարողականը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՍՏԱՆԱԼ

«Ադրբեջանում հայ բանտարկյալներին, ըստ նրանց ընտանիքների, արգելվում է կրոնական նյութեր, մասնավորապես Աստվածաշունչ ստանալ»,-այս մասին նշվում է ԱՄՆ Միջազգային կրոնական ազատության հանձնաժողովի (USCIRF) 2026թ. տարեկան զեկույցում:

Զեկույցի՝ Ադրբեջանին վերաբերող մասում ասվում է, որ փետրվարին USCIRF-ի պատվիրակությունը մեկնել է Ադրբեջան՝ գնահատելու կրոնի ազատության պայմանները եւ հանդիպելու կառավարական պաշտոնյաների հետ: «Թեեւ ադրբեջանական կառավարությունը պատրաստակամություն է հայտնել USCIRF-ի հետ երկխոսելու հարցում, այնուամենայնիվ, այդ ժամանակից ի վեր այն էական առաջընթաց չի գրանցել կազմակերպության առաջարկությունների իրականացման ուղղությամբ»,-արձանագրվում է զեկույցում:

Անդրադարձ է եղել նաեւ Արցախի հայկական պատմամշակութային ու քրիստոնեական հուշարձանների ճակատագրին: «Լեռնային Ղարաբաղում եւ հարակից տարածքներում գտնվող պատմական հայկական կրոնական հուշարձանները շարունակում են վտանգի տակ մնալ՝ Ադրբեջանի կողմից 2020 եւ 2023 թվականներին այդ տարածքների վերահսկողությունից հետո: Հուլիսի դրությամբ արբանյակային պատկերների վերլուծությունը հայտնաբերել է ութ ոչնչացված ու եւս տասը վնասված կրոնական վայր, այդ թվում՝ եկեղեցիներ, գերեզմանոցներ եւ այլ մշակութային արժեքներ»:

Ներկայացված է նաեւ հանձնաժողովի նախագահ Վիքի Հարթզլերի՝ Ադրբեջանի վերաբերյալ հատուկ կարծիքը, ըստ որի՝ Ադրբեջանը «Հատուկ դիտարկման երկրների» ցանկից պետք է տեղափոխվի կրոնական ազատությունների տեսակետից ավելի վատ վիճակում գտնվող՝ «Հատուկ մտահոգության երկրների» շարք, քանի որ երկիրը շարունակաբար, բացահայտ եւ կոպտորեն խախտում է կրոնական ազատությունը:

«Երկիրը արտաքուստ հայտարարում է, որ աջակցում է կրոնական ազատությանը, սակայն ներքուստ անում է հակառակը: Այն խոշտանգում է իր քաղաքացիներին, վերահսկում է կրոնական գործունեությունը, վտարում է անկախ լրատվամիջոցներն ու Կարմիր Խաչին եւ ոչնչացնում է կրոնական ժառանգության վայրերը:

Լեռնային Ղարաբաղից մոտ երկու տասնյակ հայ քրիստոնյա բանտարկյալները, որոնք դատվել են փակ դռների հետեւում՝ առանց բավարար իրավաբանական օգնության, ենթարկվել են ծեծի, հոգեբանական բռնության, բժշկական օգնության եւ պատշաճ սննդի մատչելիության բացակայության, զրկվել են Աստվածաշնչից, խաչի դաջվածքներն են այրելու միջոցով ջնջվել: Ոստիկանությունը պատասխանատվության չի ենթարկվում այս գործողությունների համար»:

Նա նաեւ նշում է, որ եթե Ադրբեջանը ցանկանում է լինել Միացյալ Նահանգների լիարժեք գործընկեր եւ խթանել ընդհանուր տնտեսական ու ռազմավարական նպատակները, պետք է կատարի իրական քայլեր՝ կրոնական ազատությունն իրականում ընդունելու ուղղությամբ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՆՈՐ ՀԱՐՎԱԾՆԵՐ

Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը (ԻՀՊԿ) հայտարարել է Մերձավոր Արեւելքում ԱՄՆ-ի եւ Իսրայելի թիրախների դեմ նոր հարվածների մասին:

Իրանական Press TV հեռուստաալիքի փոխանցմամբ՝ չորեքշաբթի՝ մարտի 10-ի լույս 11-ի գիշերը, Իրանը վերսկսել է հարձակումները Պարսից ծոցի իր հարեւանների, ինչպես նաեւ Մերձավոր Արեւելքում գտնվող իսրայելական եւ ամերիկյան թիրախների վրա: Իրանի պետական լրատվամիջոցները պնդում են, որ հրետակոծությունն «ամենաինտենսիվն ու զանգվածայինն» էր հակամարտության սկզբից ի վեր:

Մասնավորապես, ԻՀՊԿ-ն հայտնել է Մերձավոր Արեւելքում ԱՄՆ ռազմական շտաբի եւ Քուվեյթում գտնվող ԱՄՆ Արիֆջան ռազմաբազայի վրա չորս հրթիռ արձակելու եւ եւս երկու հրթիռ Քուվեյթում գտնվող ԱՄՆ Արիֆջան ռազմաբազայի վրա արձակելու մասին:

CNN-ը, հղում անելով տեղեկացված աղբյուրներին, հայտնել է, որ իրանական անօդաչու թռչող սարքը հարվածել է Իրաքում ԱՄՆ դիվանագիտական հաստատությանը, որը գտնվում է Բաղդադի օդանավակայանի մոտակայքում: Հարձակումներ են իրականացվում նաեւ ԱՄԷ-ում եւ Բահրեյնում գտնվող ամերիկյան բազաների վրա: Անօդաչու թռչող սարքերի թռիչքներ են գրանցվել Հորդանանում եւ Քաթարում: Իսրայելի պաշտպանության ուժերն էլ գիշերը գրանցել են Իրանի չորրորդ հրթիռի արձակումը:

Հզոր պայթյուն է տեղի ունեցել Սաուդյան Արաբիայի «Շայբա» նավթահանքում: Թագավորության պաշտպանության նախարարությունը հայտարարել է հանքավայրի ուղղությամբ հինգ անօդաչու թռչող սարքի, ինչպես նաեւ Թագավորության արեւելքում երկու անօդաչու թռչող սարքի որսման ու ոչնչացման մասին:

Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը հայտարարել է, որ «ԱՄՆ դիրքերին հարվածում ենք երկու տոննա մարտագլխիկով նոր «Խորամշահր-4» հրթիռներով»:

ՎՍՏԱՀԵՑՐԵԼ Է

CNBC-ի հետ հարցազրույցում Մերձավոր Արեւելքի հարցերով ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հատուկ ներկայացուցիչ Սթիվ Ուիթքոֆին հարցրել են, թե արդյոք Ռուսաստանն Իրանին է տրամադրում Մերձավոր Արեւելքում ԱՄՆ ռազմական օբյեկտների վերաբերյալ հետախուզական տվյալներ, եւ եթե այո, ապա ինչու է Թրամփի վարչակազմը վերացրել պատժամիջոցները, որոնք արգելում էին Հնդկաստանին գնել ռուսական նավթ:

Ուիթքոֆն ասել է, որ ինքն ու նախագահի փեսա Ջարեդ Քուշներն առանձին հեռախոսազրույց են ունեցել ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի օգնական Յուրի Ուշակովի հետ, որի ընթացքում վերջինս հերքել է հետախուզական տվյալների վերաբերյալ լուրերը: Նա վստահեցրել է, որ Մոսկվան չի օգնում Իրանին՝ ամերիկյան օբյեկտներին հարվածների հարցով:

«Գիտեք, մենք կարող ենք վստահել նրանց խոսքին: Հուսանք, որ նրանք չեն փոխանցում տվյալները»,- հավելել է Ուիթքոֆը:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

108 ՄԼՆ ԴՐԱՄ ՎԱՐԿ ԵՎ 53 ՄԼՆ ԴՐԱՄԻ ՀՈՂԱՄԱՍ

Առողջապահության նախարարի տեղակալ Լեւոն Հակոբյանը պաշտոնը ստանձնել է 2024 թվականի մարտի 27-ին: ArmLur.am-ը ուսումնասիրել է նրա՝ 2024 թվականի գույքի, եկամուտների եւ ծախսերի տարեկան հայտարարագիրը:

Հայտարարագրի համաձայն՝ պաշտոնը ստանձնելուց հետո 2024 թվականին Լեւոն Հակոբյանը հայտարարագրել է մեկ միավոր անշարժ գույք: Խոսքը վերաբերում է Երեւան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում գտնվող հողամասին, որը ձեռք է բերվել 2024 թվականի ապրիլի 4-ին գնման եղանակով: Գործարքի արժեքը կազմել է 53 միլիոն դրամ: Նշված հողամասը հայտարարագրված է որպես համատեղ սեփականություն:

• Պաշտոնատար անձը հայտարարագրել է նաեւ մեկ տրանսպորտային միջոց՝ 2020 թվականի արտադրության «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենա, որը ձեռք է բերվել 2020 թվականի հունիսի 29-ին, սակայն նույն տարում վաճառել է ավտոմեքենան 9,625,000 դրամով: Դրամական միջոցների մասով հայտարարագրում նշված է, որ բանկային հաշիվների մնացորդները կազմել են 3 միլիոն դրամ: Կանխիկ միջոցների մասով հայտարարվել է՝

• 2 միլիոն 100 հազար դրամ,

• 14,600 ԱՄՆ դոլար,

• 8,200 եվրո:

• 2024 թվականի ընթացքում Լեւոն Հակոբյանի հայտարարագրված եկամուտները կազմել են 120 միլիոն 739 հազար 479 դրամ: Դրանցից՝

• 55 միլիոն դրամ՝ ստացված վարկ Ամերիաբանկից,

• 53 միլիոն դրամ՝ եւս մեկ վարկ նույն բանկից,

• 12 միլիոն 739 հազար 479 դրամ՝ աշխատավարձ առողջապահության նախարարությունից:

Հայտարարագրում նաեւ նշված է, որ ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 108 միլիոն դրամ: Դրանցից՝

• 55 միլիոն դրամ՝ հիփոթեքային վարկ (կառուցապատման նպատակով),

• 53 միլիոն դրամ՝ հողի ձեռքբերման նպատակով ստացված վարկ:

Վարկի մարմանն ուղղված վճարումներ՝ 2,609,617 դրամ:

Այսպիսով, առողջապահության նախարարի տեղակալ Լեւոն Հակոբյանի հայտարարագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պաշտոնը ստանձնելու տարում նա ձեռք է բերել հողամաս, ունի տրանսպորտային միջոց, ինչպես նաեւ հայտարարագրել է կանխիկ եւ բանկային դրամական միջոցներ: Միեւնույն ժամանակ հայտարարագրում նշված են նաեւ զգալի վարկային պարտավորություններ:

Մասնավորապես, պաշտոնատար անձը նույն տարվա ընթացքում ստացել է երկու խոշոր վարկ, որոնց ընդհանուր գումարը հասնում է 108 միլիոն դրամի: Հաշվի առնելով, որ նրա տարեկան աշխատավարձը կազմել է շուրջ 12.7 միլիոն դրամ, հարց է առաջանում, թե ինչպես է նախատեսվում սպասարկել նման չափի վարկային պարտավորությունները:

Այս հանգամանքը կարող է առաջացնել լրացուցիչ հարցեր եւ հանրային հետաքրքրություն՝ կապված պաշտոնատար անձի ֆինանսական պարտավորությունների եւ դրանց սպասարկման հնարավորությունների հետ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿՈՇՏ ՍՊԱՌՆԱԼԻՔ

Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) խոսնակ, գեներալ Ալի Մոհամմադ Նաինին հայտարարել է, որ Իրանը կարող է միջոցներ ձեռնարկել տարածաշրջանից նավթի արտահանումը ամբողջությամբ դադարեցնելու համար, եթե ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից Իրանի դեմ իրականացվող հարձակումները շարունակվեն:

Նրա խոսքով՝ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը «կեղծ հայտարարություններ» է անում՝ փորձելով թաքցնել պատերազմի ընթացքում կրած անհաջողությունները եւ նվազեցնել ճնշումը ամերիկյան զինվորականների վրա:

Նաինին նշել է, որ ԱՄՆ ռազմածովային ուժերը եւ ռազմական ինքնաթիռները հեռացել են Իրանից ավելի քան 1000 կիլոմետր հեռավորության վրա՝ Իրանի հրթիռներից եւ անօդաչու սարքերից պաշտպանվելու համար: Նա նաեւ պնդել է, որ տարածաշրջանում տեղակայված ամերիկացի զինվորականների մի մասը լքել է բազաները եւ ապաստան գտել քաղաքներում ու հյուրանոցներում: ԻՀՊԿ խոսնակի խոսքով՝ Իրանի հրթիռային հարվածները շարունակվում են, եւ այժմ կիրառվում են ավելի հզոր հրթիռներ՝ ավելի մեծ մարտագլխիկներով, որոնք ուղղվում են ԱՄՆ-ի եւ Իսրայելի դիրքերի դեմ:

Նաինին նաեւ հայտարարել է, որ եթե հարձակումները շարունակվեն, Իրանի զինված ուժերը թույլ չեն տա տարածաշրջանից «նավթի նույնիսկ մեկ լիտրի արտահանում»: Նրա խոսքով՝ տարածաշրջանի անվտանգությունը փոխկապակցված է, եւ «եթե անվտանգություն չլինի բոլորի համար, ապա անվտանգություն չի լինի ոչ մեկի համար»:

Գեներալը հավելել է, որ Իրանի զինված ուժերը պատրաստ են պատերազմի հետագա սրման, իսկ ռազմական գործողությունների ավարտի պայմանները «որոշվելու են Իրանի կողմից»:

Ա. Վ.

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Փարիզում Թուրքիայի էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Ալփարսլան Բայրաքթարը հանդիպում է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանի հետ: Այս մասին թուրք նախարարը գրառում է կարատել X-ի իր միկրոբլոգում:

«Հարգելի ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանի հետ Փարիզում հանդիպում ունեցանք:

Քննարկեցինք ենթակառուցվածքային եւ էներգետիկ հարցեր, որոնք կնպաստեն մեր տարածաշրջանում մնայուն խաղաղությանը ու կայունությանը:

Այս համատեքստում անդրադարձանք համագործակցության ոլորտներին, մասնավորապես էլեկտրական համակարգերի փոխկապակցմանը, ատոմային էներգետիկայի եւ բնական գազին»,-գրել է Բայրաքթարը:

ԵՄ–Ն ՄԵՐԺԵԼ Է

Իրանում պատերազմի ֆոնին էներգակիրների գների զգալի աճին Եվրամիությունը դեմ է արտահայտվել ռուսական նավթի նկատմամբ պատժամիջոցների հնարավոր մեղմացմանը: «Մենք պետք է առավելագույն ճնշում գործադրենք Ռուսաստանի վրա»,- Բրյուսելում հայտարարել է ԵՄ տնտեսական հանձնակատար Վալդիս Դոմբրովսկիսը:

Նրա խոսքով՝ որոշ նավթային պատժամիջոցների վերացումը «հակաարդյունավետ» կլինի եւ «կամրապնդի Ռուսաստանի ռազմական ներուժը»: ԵՄ հանձնակատարը հավելել է, որ «կարեւոր է խստորեն պահպանել» ռուսական նավթի գնի վերին շեմը:

Այսպիսով, Դոմբրովսկիսը մեկնաբանել է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հայտարարությունը ՌԴ-ից նավթի արտահանման նկատմամբ նախկինում սահմանված որոշ սահմանափակող միջոցները դադարեցնելու պլանների մասին: Դրանք արվել են ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ հեռախոսազրույցից հետո: Հոկտեմբերին ԱՄՆ-ն պատժամիջոցներ էր սահմանել ռուսական նավթային հսկաների՝ «Ռոսնեֆտի» եւ «Լուկոյլի» նկատմամբ:

ՀԱՅՏՆԻ «ՄԱՑՈՆ»

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ԴԱՏԱԾ ԴԱՏԱՎՈՐԸ

ՀՀ նախկին ոստիկանապետ Վալերի Օսիպյանի, Երեւան քաղաքի վարչության պարեկապահակակետային գնդի հրամանատար Ռոբերտ Մելքոնյանի գործը կքննի դատավոր Մնացական Մարտիրոսյանը՝ «Մացոն»:

Հավելենք, որ Մնացական Մարտիրոսյանը 2010 թվականի հունվարին մարտի մեկի գործով 7 տարվա ազատազրկման դատապարտեց Նիկոլ Փաշինյանին:

Հիշեցնենք, որ Վ. Ռ. Օսիպյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2005 թվականի դեկտեմբերի 23-ից մինչեւ 2009 թվականի դեկտեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում, զբաղեցնելով ՀՀ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության պարեկապահակակետային գնդի հրամանատարի ծառայության գծով տեղակալի պաշտոնը, 2008 թվականի մարտի 1-ին անցնելով իր պաշտոնեական լիազորությունները, ՀՀ ոստիկանության այլ պաշտոնատար անձանց հետ հանցակցությամբ կազմակերպել է իրեն ենթակա՝ ստորաբաժանման ծառայողների կողմից բռնության եւ հատուկ միջոցների գործադրմամբ զուգորդված Երեւան քաղաքի «Ազատության» հրապարակում նստացույց անող խաղաղ ցուցարարներին ցրելը, ապա քաղաքի կենտրոնական հատվածներում նրանց կուտակումները, հնարավոր ցույցերն ու հավաքները բացառելը, որպիսի գործողություններով անձանց իրավունքներին եւ օրինական շահերին, ինչպես նաեւ հասարակության եւ պետության օրինական շահերին պատճառվել է էական վնաս:

Ռ. Վ. Մելքոնյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2005թ. նոյեմբերի 1-ից մինչեւ 2009թ. դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում, զբաղեցնելով ՀՀ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության պարեկապահակակետային գնդի հրամանատարի պաշտոնը, 2008 թվականի մարտի 1-ին անցնելով իր պաշտոնեական լիազորությունները, ՀՀ ոստիկանության այլ բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ հանցակցությամբ կազմակերպել է ոստիկանության իր ենթակա ստորաբաժանման ծառայողների կողմից բռնության եւ հատուկ միջոցների գործադրմամբ զուգորդված՝ Երեւան քաղաքի «Ազատության» հրապարակում նստացույց անող խաղաղ ցուցարարներին ցրելը, ապա քաղաքի կենտրոնական հատվածներում նրանց կուտակումները, հնարավոր ցույցերն ու հավաքները բացառելը, որպիսի գործողություններով անձանց իրավունքներին եւ օրինական շահերին, ինչպես նաեւ հասարակության եւ պետության օրինական շահերին պատճառվել է էական վնաս:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ArmLur.am-ին մանրամասներ են հայտնի դարձել Շենգավիթում 62-ամյա տղամարդուն սպանելու դեպքից:

Մասնավորապես, կասկածյալը իրավապահներին հայտնել է, թե ինքը պետք է սպաներ նրան, քանի որ «նրա մեջ սատանայական բան է տեսել», ու իր հասցեին հայհոյանք է հնչել:

Իրավապահները, չնայած օտարերկրացու ցուցմունքին, փորձում են գտնել նրանց միջեւ առկա կապը՝ հասկանալու համար՝ նախկինում կապ ունեցել են միմյանց հետ, թե ոչ:

Shamshyan.com-ը հայտնել էր, որ մարտի 6-ին Երեւանի Արշակունյաց պողոտայի թիվ 44 եւ 46 շենքերի դալանում Երեւանի բնակիչ 62-ամյա Ռուբեն Ա.-ին սպանած կասկածյալին գտել են: Նա օտարերկրացի է՝ Տաջիկստանի Հանրապետության քաղաքացի: Հայտնել էինք, որ Շենգավիթում 62-ամյա տղամարդուն սպանելու դեպքից մանրամասներ են հայտնի դարձել: Մասնավորապես, նրա որդին 44-օրյա պատերազմի մասնակից է, եւ պատերազմին մասնակցելուց հետո առողջական խնդիրներ է ունեցել: 62-ամյա Ռուբենը պարբերաբար որդուն տարել է Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտայում գտնվող բժշկական կենտրոն, եւ ահա այցերից մեկից հետո 62-ամյա տղամարդուն գտել են Արշակունյաց պողոտայի թիվ 44 եւ 46 շենքերի դալանում սպանված: Շենգավիթի բաժնից տեղեկությունը փոխանցվել է ՀՀ Քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ բաժնի պետի եւ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ:

Դեպքի փաստով Շենգավիթի քննչական բաժնում «սպանություն» հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզվում են դեպքի հանգամանքները:

Ք. Մ.

ՀԱՅՑՆ ԸՆԴՈՒՆՎԵԼ Է

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը 2025 թվականի դեկտեմբերի 11-ին հայտարարել էր, որ դատախազությունը մեկնարկել է Սեւանա լճի ափամերձ տարածքներում օրենքի խախտմամբ օտարված կամ վարձակալության հանձնված գույքերը պետությանը վերադարձնելու աշխատանքները:

Գլխավոր դատախազը նաեւ տեղեկացրել էր, որ դատախազության կողմից մի շարք գույքերի վերաբերյալ հայցեր են ներկայացվել դատարան, որոնց թվում էին նաեւ՝

- «Հարսնաքար» հյուրանոցի վարչական համալիրը (Սեւան քաղաքի Երեւանյան խճուղի 50 հասցե),
- «Հարսնաքար» հյուրանոցի քոթեջները (Սեւան քաղաքի Երեւանյան խճուղի 48/6 հասցե),
- Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախկին նախագահ, ՀՀ Ազգային Ժողովի նախկին պատգամավոր Ռուբեն Հայրապետյանի կողմից ապօրինի կառուցված Սեւանի առանձնատունը (Սեւան քաղաքի Հանգստի գոտի 3-րդ փողոց 38 հասցե):

Վերոնշյալ երեք հայցերն ընդունվել են դատարանի վարույթ:

«Հարսնաքար» հյուրանոցի քոթեջների հայցով, որը վերաբերում է «Հարսնաքար» ՍՊԸ-ի եւ «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջեւ 2003 թվականի փետրվարի 3-ին կնքված հողատարածքի վարձակալության պայմանագիրն անվավեր ճանաչելու եւ հողատարածքի վրա կառուցված շենքերն ու շինությունները Հայաստանի Հանրապետությանը վերադարձնելու պահանջին, կիրառվել է հայցի ապահովման միջոց. պատասխանողին արգելվել է այնպիսի գործողություններ կատարելը, որոնք կհանգեցնեն հայցադիմումում նշված շենքերի, շինությունների սեփականատիրոջ փոփոխությանը:

Հիշեցնենք, որ դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել էր, որ վարձակալության պայմանագրի կնքման որեւէ հիմք առկա չի եղել: Մասնավորապես, վարձակալության պայմանագրի կնքումից առաջ մրցույթ փաստացի չի անցկացվել, ինչպես նաեւ բացակայել են Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 36-րդ կետով սահմանված՝ հողատարածքն առանց մրցույթի վարձակալության իրավունքով տրամադրելու հիմքերը:

Տեղեկացնենք նաեւ, որ 2025 թվականի դեկտեմբերից առ այսօր դատախազության միջնորդագրերի կատարման արդյունքում Սեւանա լճի ափամերձ՝ բացարձակ նիշից ցածր 33 հողամասերում ապամոնտաժվել (քանդվել) է տարբեր անձանց կողմից ապօրինի կառուցված՝ հիմնական եւ ոչ հիմնական 83 շենք-շինություն, «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից լուծվել (դադարեցվել) է 2 պայմանագիր:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՊԵԿ-Ը ԿԱՆԽԵԼ Է

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն շարունակական քայլեր է ձեռնարկում ստվերային տնտեսության նվազեցման, հարկերից խուսափելու դեպքերի կանխարգելման եւ մաքսային իրավախախտումների բացահայտման ուղղությամբ:

Օրերս, ԻԻՀ քաղաքացու կողմից վարած բեռնատարը մուտք է գործել «Ագարակ» մաքսային անցման կետ: Ռենտգեն զննող սարքավորման միջոցով ստացված պատկերների ուսումնասիրության արդյունքում մաքսային ծառայողների մոտ կասկած է առաջացել, որ բեռնատարում առկա է ծխախոտային արտադրանքի խոշոր խմբաքանակ, թեպետ վարորդի կողմից բանավոր հարցման ժամանակ հերքվել էր մաքսային հսկողությունից թաքցված կամ հայտարարագրման ենթակա ապրանքների առկայության փաստը: Մաքսային անցման կետի շվաքարանում, վարչության մաքսային սպասարկման եւ հսկողության թիվ 14 բաժնի աշխատակիցների իրականացված մաքսային զննության արդյունքում, կիսակցորդի բեռնախցիկի միջից հայտնաբերվել է չհայտարարագրված 10760 տուփ տարբեր գրառումներով ծխախոտային արտադրանք:

Ոչ օրինական ճանապարհով ծխախոտի ներմուծման փորձը կանխվել է, հայտնաբերված ծխախոտային խմբաքանակն առգրավվել է: ԻԻՀ քաղաքացի Մ. Ա-ի նկատմամբ կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն՝ համաձայն «Մաքսային կարգավորման մասին օրենքի» 316-րդ հոդվածի հատկանիշներով:

Դեպքին առնչվող նյութերն ուղարկվել են ՊԵԿ Պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման եւ հսկողության վարչություն՝ հետագա ընթացքն ապահովելու նպատակով:

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Դատախազությունում վերլուծվել են 2018-2025 թվականների՝ քրեական վարույթներով, դատարաններում ավարտված գործերով, պետական եւ համայնքային շահերի պաշտպանության հայցերով ու հաշտություններով, դատախազական ներգործության միջոցներով, իսկ 2023 թվականից՝ նաեւ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործիքակազմի կիրառման արդյունքում, Հայաստանի Հանրապետության եւ համայնքների սեփականությանը կամ տիրապետմանը վերադարձված գույքերի եւ դրամական միջոցների ցուցանիշները:

Ըստ այդ ցուցանիշների՝ 2018-2025 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության եւ համայնքների սեփականությանը կամ տիրապետմանն է վերադարձվել շուրջ 291 միլիարդ 726 միլիոն դրամի (շուրջ 773 միլիոն դոլարի) գույք եւ դրամական միջոց, որից 65.8%-ը կամ շուրջ 193 միլիարդ դրամի (շուրջ 504 միլիոն դոլարի) գույքն ու դրամական միջոցը՝ 2023-2025 թվականներին:

● *Անցած 1 օրում գրանցվել է 8 ավտովթար. 12 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ՈՐՈՇՈՒՄ ԴԵՌ ՉԿԱ

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը մարտի 1-ին Ֆեյսբուքում ուղիղ եթեր է մտել Տավուշի մարզի Աճարկուտ գյուղից եւ հայտարարել է. «Դուք գիտեիք, որ մենք ունեինք սահմանամերձ բնակավայրերում բնակապահովման ծրագիր, որը հայտնի էր ավելի շատ 16 միլիոնների ծրագիր անվանմամբ, որովհետեւ 16 միլիոն դրամ աջակցություն էին տալիս որոշ բացառություններով, որտեղ 21 միլիոն էին տալիս՝ մի քանի գյուղում, առանձնատներ կառուցելու համար, այն քաղաքացիներին, որոնք բավարարում էին որոշակի պայմաններ: Իսկ պայմանները հետեւյալն էին, որ տանը պետք է լիներ անչափահաս երեխա ընտանիքում կամ առնվազն ամուսինների տարիքը չպետք է գերազանցեր 75 տարեկանը: Հիմա ծրագիրը վերագործարկում ենք 3 կոմպոնենտով: Որպեսզի պարզ լինի, փորձեմ արագ բացատրել: Ուրեմն՝ առաջին կոմպոնենտն այն քաղաքացիների համար է, որոնք չէին հասցրել օգտվել նախկին ծրագրից, սակայն ունեին հողամաս կամ շինթույլտվություն մինչեւ մայիսի 1-ի դրությամբ 2025 թվականի, իսկ հողամասն էլ եթե ձեռք էր բերվել 24-ի սեպտեմբերից մինչեւ մայիսի 1-ը, էդ հատվածում, երբ որ ծրագիրը կրկին երկարացվել էր: 2-րդ կոմպոնենտը նոր քվոտաներն են որոշակի բնակավայրերի համար, որտեղ որ հարաբերականորեն ավելի քիչ տներ են կառուցվել: Բայց դա այն բնակավայրերն են, որոնք որ կային 1-ին ծրագրի մեջ: Եւ 3-րդ կոմպոնենտը, մենք ընդլայնում ենք դպրոցաշինության հետ կապված: Մենք մի նման գյուղ ունեինք, դա Վայքի Գոմք գյուղն էր: Բայց մենք հիմա այդ ցուցակը ընդլայնում ենք եւ այլ մարզերի նաեւ, մինչեւ այդ երբեւէ չեղած մարզերի շատ գյուղերում քվոտաներ ենք տալիս, որտեղ որ կառուցվում են նոր դպրոցներ, որպեսզի խթանենք այդ դպրոցներում աշակերտների ավելացումը: Ցանկը հիմա հրապարակված է e-draft կայքում, ես էս ուղիղ եթերի տակ այն կդնեմ, որպեսզի դուք ծանոթանաք եւ ամենայն հավանականությամբ՝ 2-3 շաբաթվա մեջ կառավարության այդ որոշումը կընդունվի, եւ մենք կվերագործարկենք այս շատ կարեւոր ծրագիրը»:

Արսեն Թորոսյանն այդ ուղիղ եթերում հայտնել է նաեւ, որ այդ ծրագիրը մինչ այժմ 2300 շահառու ունի, որոնք նոր տներ են կառուցել: ԱԺ ընտրություններից առաջ իշխանությունը սահմանագոտու բնակիչների համար տների կառուցման ծրագրի վերսկսում է խոստանում: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին մարտի 5-ին հարցում եմ արել, թե Տավուշի մարզի որ գյուղերում է վերաբացվելու պետական աջակցությամբ 16 եւ 21 միլիոն դրամ արժեքով առանձնատների կառուցման ծրագիրը, երբ է դա վերաբացվելու: Մարզպետի աշխատակազմից հայտնել են. «Սահմանամերձ գյուղերում պետական աջակցությամբ առանձնատների կառուցման ծրագրի վերաբացվելու վերաբերյալ տեղեկատվություն կարող ենք տրամադրել ՀՀ կառավարության կողմից համապատասխան որոշում ընդունվելուց հետո»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՏԱ

ՈՎՔԵՐ ԵՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ԸՆՏՐՅԱԼՆԵՐԸ»

ArmLur.am-ի տեղեկություններով՝ կառավարության այսօրվա նիստում ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը պատրաստվում է հերթական անգամ մի շարք ընկերությունների տրամադրել մաքսատուրքից ազատման արտոնություններ:

Խոսքը ներդրումային ծրագրերի շրջանակում ներմուծվող սարքավորումների եւ հումքի համար մաքսատուրք չվճարելու հնարավորության մասին է, ինչը բիզնեսների համար փաստացի նշանակում է զգալի ֆինանսական արտոնություն պետության կողմից:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ այս անգամ կառավարության «արտոնյալների ցանկում» հայտնվել են 5 ընկերություններ եւ մեկ անհատ ձեռնարկատեր:

«ՊԱՊՐԻԿԱ» ՍՊԸ

Արտոնություն կտրամադրվի «ՊԱՊՐԻԿԱ» ՍՊԸ-ին: Ընկերությունը զբաղվում է սննդամթերքի ներմուծմամբ եւ սննդարդյունաբերության համար անհրաժեշտ բաղադրիչների մատակարարմամբ:

Բաց աղբյուրներում ընկերության մասին հրապարակային տեղեկությունները բավական սահմանափակ են, ինչը հաճախ բնորոշ է այն ընկերություններին, որոնք հիմնականում աշխատում են ներմուծման շուկայում եւ պետական ծրագրերի շրջանակում են ակտիվանում:

«ԲԵԿՈՆ պրոդուկտ» ՍՊԸ

Արտոնություն կստանա նաեւ «ԲԵԿՈՆ պրոդուկտ» ՍՊԸ-ն: Ընկերությունը գործում է մսամթերքի արտադրության ոլորտում եւ զբաղվում է խոզի մսի վերամշակմամբ ու մսամթերքի արտադրությամբ:

Մաքսատուրքից ազատման արտոնությունը ընկերությանը հնարավորություն կտա ավելի էժան ներմուծել արտադրական սարքավորումներ եւ հումք, ինչը հաճախ կառավարության կողմից հիմնավորվում է «արտադրության խթանման» անհրաժեշտությամբ:

«ՌՈՅԱԼ ԳԼԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Արտոնություն կստանա նաեւ «ՌՈՅԱԼ ԳԼԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

Հատկանշական է, որ ընկերությունը նմանատիպ արտոնություն ստացել էր դեռեւս 2018 թվականին: Այդ ժամանակ հայտարարվել էր, որ Կոտայքի մարզի Նոր Գեղի գյուղում նախատեսվում է զարգացնել պտղատու այգիներ, կառուցել սառնարանային պահեստներ եւ ընդլայնել հյութերի արտադրությունը:

Այսինքն՝ նույն ընկերությունը արդեն երկրորդ անգամ է հայտնվում պետական արտոնությունների ցանկում:

«ԳԼՈՐԻԱ» կարի ֆաբրիկա

Կառավարությունը արտոնություն է տրամադրելու նաեւ «ԳԼՈՐԻԱ» կարի ֆաբրիկային:

«Գլորիան» Հայաստանի թեթեւ արդյունաբերության խոշոր ընկերություններից է, որը համագործակցում է միջազգային բրենդների հետ եւ հիմնականում արտադրանքն արտահանում է Եվրոպա:

Նման ծրագրերի շրջանակում նախկինում եւս թեթեւ արդյունաբերության ընկերություններին պետությունը տրամադրել է հարկային կամ մաքսային արտոնություններ:

Անհատ ձեռնարկատեր Սերգո Խաչոյան

Արտոնություն կտրամադրվի նաեւ անհատ ձեռնարկատեր Սերգո Խաչոյանին: Վերջինս նախատեսում է ներդրումային ծրագրի շրջանակում ներմուծել սարքավորումներ, որոնք եւս կազատվեն մաքսատուրքից:

«ԲԵՏՈՆԱԳՈՐԾ» ՓԲԸ

Կառավարության արտոնությունների ցանկում է նաեւ «ԲԵՏՈՆԱԳՈՐԾ» փակ բաժնետիրական ընկերությունը: Ընկերությունը զբաղվում է շինարարական նյութերի արտադրությամբ՝ մասնավորապես բետոնե եւ երկաթբետոնե կոնստրուկցիաների արտադրությամբ, որոնք օգտագործվում են շինարարության մեջ:

Այսօրվա կառավարության նիստում այս հարցերը ներկայացնելու է ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՐՎԱԾՆԵՐ ԵՆ ՀԱՍՑՐԵԼ

ԱՄՆ-ի զինված ուժերը հայտարարել են, որ հարվածներ են հասցրել Իրանի 16 ականադրող նավերին՝ Հորմուզի նեղուցի տարածքում: Այս նեղուցը համարվում է աշխարհի ամենակարեւոր նավթային ուղիներից մեկը, որով անցնում է համաշխարհային նավթի մոտ մեկ հինգերորդը:

Հարվածների մասին հայտարարությունը տեղի է ունեցել այն պահին, երբ ԱՄՆ-ը իշխանությունները փորձում են հստակ ռազմավարություն ներկայացնել Իրանի դեմ ընթացող պատերազմի վերաբերյալ:

Մերձավոր Արեւելքում ընդլայնվող հակամարտության հետեւանքով արդեն զոհվել է ավելի քան 1800 մարդ, որոնց մեծ մասը Իրանում: Պատերազմը նաեւ լուրջ ազդեցություն է ունեցել համաշխարհային էներգետիկ շուկաների վրա: Նավթատար նավերի մեծ մասը դադարեցրել է անցնել Հորմուզի նեղուցով՝ վախենալով անօդաչու սարքերի կամ հրթիռների հարվածներից: Արդյունքում նավթի գները բարձրացել են, ինչը թանկացրել է վառելիքը տարբեր տարածաշրջաններում:

Միեւնույն ժամանակ Բեյրութում հարված է հասցվել բնակելի շենքերի: Լիբանանի պետական լրատվական գործակալության տվյալներով՝ դեպքը տեղի է ունեցել Աիշա Բաքքար թաղամասում: Տեսանյութերում երեւում են այրվող բնակարաններ, վնասված մեքենաներ եւ փողոցում ընկած բեկորներ: Տուժածների մասին տեղեկություններ դեռեւս չկան:

Նույն օրը առավոտյան Քաթարի պաշտպանության նախարարությունը հայտնել է հրթիռային հարձակման մասին, որը հակաօդային պաշտպանության միջոցով կասեցվել է:

Տարածաշրջանի մի շարք երկրներ նույնպես հաղորդել են անօդաչու սարքերի եւ հրթիռների մասին.

- Արաբական Միացյալ Էմիրությունները հայտնել է, որ իր հակաօդային պաշտպանությունը որսում է Իրանից արձակված հրթիռներ եւ դրոններ:
- Սաուդյան Արաբիան հայտարարել է, որ խոցել է ավելի քան 20 անօդաչու սարք եւ 7 բալիստիկ հրթիռ:
- Քուվեյթի ազգային գվարդիան հայտնել է 8 անօդաչու սարք խոցելու մասին:

Բացի այդ, առեւտրային կոնտեյներային նավը վնասվել է անհայտ արկից Արաբական Միացյալ Էմիրությունների ափերի մոտ՝ կրկին Հորմուզի նեղուցի տարածքում: Մեծ Բրիտանիայի ծովային անվտանգության ծառայության տվյալներով՝ նավի անձնակազմը չի տուժել:

Մասնագետների կարծիքով՝ նավերի վրա հնարավոր հարձակումների վտանգը գրեթե կանգնեցրել է նավթատարների երթեւեկությունը Հորմուզի նեղուցով, որը համաշխարհային նավթի փոխադրման ամենակարեւոր ուղիներից մեկն է:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

● *Մարտի 5-ից 6-ը ՀՀ-ում բացահայտվել է 151 հանցագործություն, որոնցից 7-ը՝ նախկինում կատարված:*

ԼՈՒՐԵՐ

ԿԱՍԵՑՎԵԼ Է

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ կասեցվել է «Գրիլ.ամ» ՍՊԸ-ին պատկանող հանրային սննդի օբյեկտի արտադրական գործունեությունը (ք. Երեւան, Խորենացու 88): Տեսչական մարմնի սննդամթերքի անվտանգության վարչության տեսուչների կողմից իրականացված ստուգման ընթացքում պարզվել է, որ այստեղ խախտվել են օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ պահանջները:

Մասնավորապես՝

• սննդի կառույցի խոհանոցի հատակը չի ունեցել հարթ մակերես, եղել է ոչ նորոգ վիճակում, ինչն էլ թույլ չի տվել հեշտորեն մաքրել եւ ախտահանել այն,

•խոհանոցի պատերի մակերեսը չի եղել հարթ, պատրաստված չի եղել անջրանցիկ, չներծծող նյութերից:

Տնտեսվարողին հանձնարարվել է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ եւ սննդի կառույցը համապատասխանեցնել նորմերին:

ՏՎՅԱԼՆԵՐ

ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների համաձայն՝ 2026թ.-ի հունվարին բեռնափոխադրումների ծավալը կազմել է 1,023.6 հազար տոննա: 2025թ.-ի համադրելի ցուցանիշի համեմատ գրանցվել է անկում 8.4%-ով: Մասնավորապես երկաթուղային բեռնափոխադրումների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 30.6%-ով եւ կազմել է 152.2 հազար տոննա: Այդ թվում արտահանվել է 29.6 հազար տոննա բեռ, ներկրվել՝ 53.6 հազար տոննա, իսկ ներհանրապետական բեռնափոխադրումների ծավալը կազմել է 69.0 հազար տոննա: Ավտոմոբիլային բեռնափոխադրումների ծավալը 2025թ.-ի հունվարի համեմատ աճել է 22.9%-ով եւ կազմել է 571.2 հազար տոննա: Այդ թվում արտահանվել է 42.4 հազար տոննա բեռ, ներկրվել՝240.5 հազար տոննա, իսկ ներհանրապետական բեռնափոխադրումների ծավալը կազմել է 288.3 հազար տոննա: Օդային բեռնափոխադրումների ծավալը նախորդ տարվա համադրելի ցուցանիշի համեմատ աճել է 12.9%-ով եւ կազմել է 3.5 հազար տոննա: Այդ թվում արտահանվել է 1.8 հազար տոննա բեռ, ներկրվել՝ 1.7 հազար տոննա: Մայրուղային խողովակաշարային բեռնափոխադրումների ծավալը 2025թ.-ի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 15.4%-ով եւ կազմել է 296.7 հազար տոննա:

Հայտարարություն

Չոբանյան Սմբատ Սիմակովիչի անվամբ տրված Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի դիպլոմները եւ դրանց հավելվածները՝

ԱՄ N 049367 (գր. h. 864),
117705 N 0035166 (գր. h. 899),
ՐԲ 18011 (գր. h. 198),
ԱԲ 164974 (գր. h. 257),
համարվում են անվավեր կորստի պատճառով:

Հայտարարություն

Կորել է Երեւանի պետական հենակետային բժշկական քոլեջի 2010թ. քույրական գործ մասնագիտության շրջանավարտ Հասմիկ Տեր-Վարդանյան Վարազդատի դիպլոմը N 085403-ի:

ԱՌԱՋԱՐԿ՝ԲԻԶՆԵՍԻՆ

Գ

10 ԿԱՄ 15 ՏՈԿՈՍ ՔԵՇԲԵՔ ՍՏԱՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում կանաչ ներդրումները աստիճանաբար դառնում են ոչ թե այլընտրանք, այլ ռազմավարական ընտրություն:

Հայաստանի լիզինգային շուկայի առաջատար Ակբա Լիզինգը 2019 թվականից համագործակցում է Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի կողմից իրականացվող GEFF-ը Հայաստանում ծրագրի հետ՝ նպաստելով տնտեսության կայուն զարգացմանը եւ շրջակա միջավայրի պահպանությանը:

Ծրագրի շրջանակում ֆինանսավորվում են արեւային ֆոտովոլտային կայաններ, էներգաարդյունավետ սարքավորումներ եւ էլեկտրական ավտոմեքենաներ: Ակբա Լիզինգը բիզնեսներին առաջարկում է լիզինգային ճկուն գործիքներ, իսկ GEFF-ը Հայաստանում ծրագրի միջոցով բիզնեսները կարող են օգտվել նաեւ 10 կամ 15 տոկոս քեշբեքի հնարավորությունից՝ համապատասխանաբար էլեկտրամոբիլներ, արեւային կայաններ կամ էլեկտրական մեքենաների համար լիցքավորման կայաններ ձեռք բերելու դեպքում:

«Ակբա Լիզինգը դեռ 2016 թվականից շուկայում սկսել է ֆինանսավորել էներգախնայող սարքավորումները որպես առանձին ուղղություն: Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի հետ համագործակցության շնորհիվ մենք էլ ավելի ենք զարգացրել այդ ուղղությունը եւ մեր հաճախորդները հնարավորություն են ստանում օգտվել շահավետ պայմաններից: ՎՋԵԲ-ի հետ վերջերս մեկնարկած նոր համագործակցության արդյունքում մեր հաճախորդները հնարավորություն ունեն ստանալ նաեւ քեշբեք»,- նշել է Ակբա Լիզինգի Մատակարարների հետ համագործակցության բաժնի ղեկավար Վահագն Շմավոնյանը:

«Ակբա Լիզինգը ներկայումս մեծ ակտիվություն է ցուցաբերում կանաչ ներդրումների ֆինանսավորման ուղղությամբ: Սա ներառում է այնպիսի տարածված ներդրումներ, ինչպիսիք են արեւային ֆոտովոլտային կայանների եւ էլեկտրական ավտոմեքենաների ֆինանսավորումը: Բացի այդ, Ակբա Լիզինգը GEFF-ը Հայաստանում ծրագրի շրջանակում իր հաճախորդներին առաջարկում է էներգաարդյունավետ տեխնոլոգիաների լայն տեսականի, ինչը հնարավորություն է տալիս գրեթե բոլոր ոլորտներում գործող բիզնեսներին գտնել իրենց գործունեությանը համապատասխան կանաչ լուծում եւ իրականացնել ներդրում՝ միաժամանակ բարձրացնելով բիզնեսի արդյունավետությունն ու նվազեցնել ծախսերը»,- նշել է GEFF-ը Հայաստանում ծրագրի ղեկավարի տեղակալ Անդրո Բութխուզին:

«Ցանկացած բիզնեսի համար շատ կարեւոր է անմիջապես ստանալ իր սարքավորումը կամ տրանսպորտային միջոցը: GEFF-ը Հայաստանում ծրագրի շրջանակում հնարավորություն կա այս պահին ունենալ անհրաժեշտ սարքավորումը նաեւ քեշբեքի հնարավորությամբ: Ստացվում է, որ պրոդուկտը, սարքավորումը, տրանսպորտային միջոցը չի թանկանում, եւ սա բավականին լուրջ առավելություն է»,- նշել է Roel Auto2otive Group-ի տնօրեն Արտակ Զոփունյանը:

Ակբա Լիզինգը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ԿԱՐԵՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ

Ռուսաստանը շարունակում է մնալ Հայաստանի կարեւոր առեւտրային գործընկերներից մեկը՝ 2025 թվականի արդյունքներով զբաղեցնելով արտաքին առեւտրի ընդհանուր ծավալի ավելի քան 35%-ը: Այս մասին հայտարարեց ՀՀ էկոնոմիկայի փոխնախարար Նարեկ Հովակիմյանը Երեւանում սննդամթերքի եւ ժողովրդական սպառման ապրանքների ոլորտում միջազգային գործարար առաքելության աշխատանքների մեկնարկին նվիրված հանդիպման ընթացքում:

Հովակիմյանը նշեց, որ վերջերս երկկողմ առեւտրատնտեսական հարաբերությունները դինամիկ զարգանում են: Նրա խոսքով՝ ոլորտների զարգացման ամենակարեւոր ասպեկտները կապված են սննդի եւ ժողովրդական սպառման ապրանքների հետ: Նշված ոլորտները զգալի բազմապատկիչ ազդեցություն ունեն:

«Այս ոլորտներից մեկի զարգացումը խթանում է աճը եւ բարգավաճումը տնտեսության այլ ոլորտներում՝նպաստելով նոր աշխատատեղերի ստեղծմանը եւ սպառողական պահանջարկի աճին: Սա ընդգծում է շուկայի տարբեր մասնակիցների միջեւ ակտիվ փոխգործակցության եւ համագործակցության անհրաժեշտությունը՝ կայուն տնտեսական աճի հասնելու եւ ընդհանուր բարեկեցությունը բարելավելու համար»,-նշեց նա:

Նա ընդգծեց համագործակցության զգալի ներուժի առկայությունը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են սննդի արդյունաբերությունը, դեղագործությունը եւ այլն: Այս ներուժը կարող է իրացվել համատեղ նախագծերի եւ գյուղատնտեսության ոլորտում համագործակցության շղթաների ստեղծման միջոցով: Հայաստանում վերջին տարիներին ակտիվ զարգանում է գյուղատնտեսությունը, պետական եւ մասնավոր ծրագրեր են իրականացվում գյուղատնտեսական ոլորտի արդիականացման, արտադրության ընդլայնման եւ արտադրանքի որակի բարելավման համար:

ՀՀ-ում Ռուսաստանի դեսպան Սերգեյ Կոպիրկինը նույնպես նշեց, որ Ռուսաստանը պահպանում է Հայաստանի գլխավոր տնտեսական գործընկերոջ դերը: Այդ մասին նա հայտարարեց բիզնես առաքելության մասնակիցներին ուղղված իր ուղերձում, որն ընթերցեց դեսպանատան խորհրդական-դեսպանորդ Դմիտրի Լիցկայը:

«Ինչպես ցույց են տվել նախորդ տարվա արդյունքները, Ռուսաստանը պահպանել է հանրապետության հիմնական առեւտրատնտեսական եւ ներդրումային գործընկերոջ դերը: Ռուսական կապիտալը լայնորեն ներկայացված է երկրի տնտեսության հիմնական ոլորտներում՝ հանքարդյունաբերություն, էներգետիկա, մետալուրգիա, տրանսպորտ եւ լոգիստիկա, բանկային ոլորտ, տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաներ»,-ասվում է ուղերձում:

Նրա խոսքով՝ռուսաստանյան տնտեսական օպերատորների առաջատար դիրքերը ոչ միայն համատեղ խորհրդային պատմության ժառանգությունն են, այլեւ երկու երկրների բիզնես համայնքների անխոնջ աշխատանքի արդյունք, որոնք ակտիվորեն զարգացնում են բիզնես համագործակցությունը՝ չնայած տնտեսական եւ լոգիստիկ դժվարություններին եւ աշխարհաքաղաքական անկայունությանը:

Դեսպանը նաեւ ընդգծեց Հայաստանի 11-ամյա անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը, որի մեխանիզմները խթանել են երկկողմ առեւտրատնտեսական կապերն ու արդյունաբերական համագործակցությունը:

Հիշեցնենք, որ սննդամթերքի եւ ժողովրդական սպառման ապրանքների ոլորտում միջազգային գործարար առաքելության աշխատանքների մեկնարկին նվիրված հանդիպումը կազմակերպվել էր Հայաստանում Ռուսաստանի առեւտրային ներկայացուցչության եւ Ռուսաստանի արտահանման կենտրոնի ջանքերով «Արտադրված է Ռուսաստանում» ծրագրի շրջանակում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՐՏԻՍՏԸ

ՎԱՂԱՐՇԱԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ 126-ԱՄՅԱԿԸ

Մարտի 12-ին լրանում է կրկեսային արտիստ, Հայաստանի ազգային Կրկեսային կոլեկտիվի հիմնադիր Վաղարշակ Արզումանյանի ծննդյան 126-ամյակը:

Կրկեսային արվեստը, անկասկած, ամենահուզիչն ու ամենահետաքրքիրն է: Կրկես այցելում են բոլորը՝ փոքրից մինչեւ մեծ, քանի որ միշտ էլ հետաքրքիր է լինել ծաղրածուների, մարզիչների եւ կրկեսային արտիստների աշխարհում:

Հենց Վաղարշակ Արզումանյանն է ժամանակին դարձել Հայաստանի կրկեսի պատմության հիմնադիրը:

1956 թվականին Մոսկվայում պետք է անցներ հայկական տասնօրյակը: Անմիջապես որոշում է կայացվել ներկայացնել նաեւ հայկական կրկեսային արվեստը:

Ընդամենը 6 ամսում Արզումանյանին վստահեցին հավաքել ազգային հավաքական: Այդ ժամանակ կրկեսի հայ արտիստները տարբեր թատերախմբերի կազմում հյուրախաղերով հանդես էին գալիս ամբողջ աշխարհում, սակայն առանձին հայկական կոլեկտիվ չկար: Արզումանյանը մասնագիտական աչքով անմիջապես բացահայտեց տաղանդավոր եւ պրոֆեսիոնալ արտիստներին՝ ընդլայնելով նրանց ցանկը:

Պաշտոնապես առաջին ազգային կրկեսային կոլեկտիվը բաղկացած էր 22 հոգուց: Մոսկվայի փառատոնում նորաթուխ կոլեկտիվը մեծ հաջողություն ունեցավ՝ տպավորելով հանդիսատեսին:

1962 թվականի նոյեմբերի 29-ին Երեւանում տեղի ունեցավ կրկեսի հանդիսավոր բացումը: Եւ այդ ժամանակ այստեղ հավաքվել էր հանրապետության տարբեր վայրերից ժամանած հանդիսատես՝ողջունելու կրկեսային արտիստների հայկական կոլեկտիվին:

Վաղարշակ Արզումանյանը մեծ ներդրում է ունեցել Հայաստանի կրկեսի ձեւավորման գործում: Նա հեղինակել է կրկեսային բազմաթիվ համարներ: Բարձր վարպետություն եւ համարձակություն պահանջող նրա լավագույն համարը եղել է կրկեսի գմբեթից ձգված թեք պարանով, հատուկ անվակների օգնությամբ մեծ արագությամբ գլխիվայր իջնելը:

Արտիստն ունեցել է բազմաթիվ պարգեւներ, նրան շնորհվել է ժողովրդական արտիստի կոչում, արժանացել է «Պատվո նշան» շքանշանի:

Վաղարշակ Արզումանյանը կյանքից հեռացել է 1968 թվականի մայիսի 9-ին:

ԱՇԽԱՐՀ

ՄԵՂԱԴՐՎՈՒՄ Է



ԱՄՆ-ում 35-ամյա կին է մեղադրվում երգչուհի Ռիհաննայի՝ Բեւերլի Հիլզում գտնվող տան ուղղությամբ կրակոցներ արձակելու համար:

Իրավապահ մարմինների տվյալներով՝ Ֆլորիդայի բնակչուհի Իվանա Լիզեթ Օրթիսը, ենթադրաբար, կիսաավտոմատ հրազենով 10 կրակոց է արձակել երգչուհու տան ուղղությամբ այն պահին, երբ տանը գտնվում էին Ռիհաննան եւ նրա ընտանիքի անդամները:

Կնոջ նկատմամբ առաջադրվել է 14 մեղադրանք, այդ թվում՝

- սպանության փորձի մեկ մեղադրանք,
- կիսաավտոմատ հրազենով անձի նկատմամբ 10 հարձակման մեղադրանք,
- բնակեցված տան ուղղությամբ կրակելու 3 մեղադրանք:

Բոլոր մեղադրանքները համարվում են ծանր հանցագործություններ:

Իրավապահների խոսքով՝ կրակոցների հետեւանքով ոչ ոք չի տուժել, թեեւ դեպքի պահին տանը եղել են Ռիհաննան, նրա զուգընկերը՝ A$AP Rocky-ն, նրանց երեք երեխաները, ինչպես նաեւ երգչուհու մայրը: Այս մասին հայտնել է Լոս Անջելեսի շրջանի դատախազը:

Դեպքի շարժառիթը դեռեւս անհայտ է:

Հանրային տվյալների համաձայն՝Օրթիսի վերջին գրանցված հասցեն եղել է Ֆլորիդայի Օրլանդո քաղաքում, եւ նա ավելի քան 10 տարի աշխատել է որպես խոսքի թերապեւտ (speech pathologist):

Դատարանում նրա առաջին լսումը հետաձգվել է մինչեւ մարտի 25-ը: Կինը պահվում է կալանքի տակ՝ 1.8 միլիոն դոլար գրավի դիմաց: Եթե դատարանը նրան մեղավոր ճանաչի բոլոր մեղադրանքներով, նրան կարող է սպառնալ ցմահ ազատազրկում:

ԴԻԶԱՅՆԵՐԸ ՀԱՂԹԵԼ Է

Ավստրալացի նորաձեւության դիզայներ Քեթի Թեյլորը հաղթել է երկարամյա դատական վեճում ամերիկացի փոփ երգչուհի Քեթի Փերիի դեմ՝ ստանալով իր անունով հագուստ վաճառելու իրավունքը: Ավստրալիայի բարձրագույն դատարանը որոշել է, որ դիզայների «Katie Perry» բրենդը չի խախտում ապրանքանիշերի մասին օրենքը եւ չի կարող շփոթություն առաջացնել երգչուհու բրենդի հետ: Դատական նյութերի համաձայն՝դիզայները, որը ծնվել է Քեթի Փերի անունով, 2007 թվականին դիմել էր այդ անունով բիզնես գրանցելու համար եւ նշել էր, որ այդ ժամանակ դեռ չէր լսել երգչուհու մասին: Նա 2008 թվականի սեպտեմբերին դիմել էր «Katie Perry» ապրանքանիշը գրանցելու համար՝ հագուստի վաճառքի նպատակով: Դա տեղի էր ունեցել երգչուհու առաջին հայտնի երգի՝I Kissed a Girl-ի թողարկումից մի քանի ամիս անց:

Դատական վեճը սկսվել է 2009 թվականին, երբ երգչուհին պաշտոնապես առարկել է ապրանքանիշի գրանցմանը եւ ավստրալացի դիզայներին ուղարկել է գործունեությունը դադարեցնելու պահանջներ:

Դիզայները, որը 2015 թվականին փոխել է իր ազգանունը եւ դարձել Քեթի Թեյլոր, երկու տարի առաջ դատարանում հաղթել էր՝ ապացուցելով, որ երգչուհին 2014 թվականի ավստրալական համերգային շրջագայության ընթացքում վաճառել է ապրանքներ, որոնք խախտել են իր ապրանքանիշը: Սակայն 2024 թվականին այդ որոշումը չեղարկվել էր, եւ դիզայների ապրանքանիշը ժամանակավորապես անվավեր էր ճանաչվել: Այն ժամանակ Թեյլորը դատական գործը բնութագրել էր որպես «Դավիթի եւ Գողիաթի պայքար»՝ նշելով, որ որոշումը իրեն մեծ հիասթափություն էր պատճառել: Դրանից հետո նա դիմել էր Ավստրալիայի բարձրագույն դատարան:

Չորեքշաբթի օրը բարձրագույն դատարանի հինգ դատավորներից երեքը կողմ են քվեարկել Թեյլորի օգտին: Նրանք մերժել են երգչուհու փաստաբանների այն պնդումը, թե երգչուհին արդեն մեծ հեղինակություն էր ձեռք բերել Ավստրալիայում 2008 թվականին, երբ դիզայները դիմել էր ապրանքանիշի գրանցման համար՝ նշելով, որ այդ հեղինակությունը չի տարածվել հագուստի ոլորտի վրա:

Դատարանը նաեւ արձանագրել է, որ երգչուհու «Kitty Purry» ապրանքանիշը եւ նրա միջազգային ապրանքների դիստրիբյուտորը՝ Bravado, խախտել են դիզայների ապրանքանիշի իրավունքները:

Դատարանի որոշումից հետո Թեյլորը հայտարարել է. «Սա եղել է շատ երկար եւ դժվար ճանապարհ: Սակայն այսօրվա որոշումը հաստատում է այն, ինչին ես միշտ հավատացել եմ՝ ապրանքանիշերը պետք է պաշտպանեն բոլոր բիզնեսներին՝անկախ դրանց չափից»:

Նա նաեւ նշել է, որ այս գործը միայն անվան մասին չէր, այլ Ավստրալիայում փոքր բիզնեսների իրավունքների պաշտպանության մասին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԻՆՅԱՆՈՆ ՀԵՌԱՑԱՎ

Հայաստանի հավաքականի ֆիզպատրաստության մարզիչ Ֆրանսիսկո Խավիեր Մինյանոն այլեւս չի աշխատի Հայաստանի ազգային հավաքականում, հաղորդում է ՀՖՖ-ի կայքը: Այս տարիներին նա ընդգրկված է եղել Արմեն Գյուլբուդաղյանցի, Խոակին Կապառոսի, Ալեքսանդր Պետրակովի, Ջոն վան՛տ Սխիպի եւ Եղիշե Մելիքյանի մարզչական շտաբերում: 7 տարի ազգային հավաքականում աշխատելուց հետո Մինյանոն հրավեր է ստացել Իսպանիայի ֆուտբոլի ֆեդերացիայից: Նա այսուհետեւ զբաղեցնելու է երիտասարդ տաղանդների զարգացման դեպարտամենտի ղեկավարի պաշտոնը: Նաեւ համակարգելու է ՈՒԵՖԱ-ի եւ ՖԻՖԱ-ի ծրագրերն Իսպանիայի ֆուտբոլի ֆեդերացիայում:

«7 անմոռանալի տարի Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայում՝ որպես ազգային հավաքականի ֆիզպատրաստության մարզիչ աշխատելուց հետո եկել է ժամանակը փակելու կյանքիս այս յուրահատուկ էջը: Խորին երախտագիտություն եմ հայտնում հայ ժողովրդին, խաղացողներին, մարզչական շտաբին եւ ֆեդերացիայի բոլոր աշխատակիցներին, որոնք հնարավոր դարձրին այս ճանապարհը: Ձեր վստահությունը, պրոֆեսիոնալիզմը եւ բարությունն օգնեցին, որ Հայաստանը դառնա իմ տունը: Այս տարիները լի էին ուսուցմամբ, մարտահրավերներով եւ բացառիկ մարդկային հարաբերություններով, որոնք ես միշտ կպահեմ ինձ հետ: Հայաստանը միշտ առանձնահատուկ տեղ կունենա իմ սրտում: Շնորհակալություն, Հայաստան»,-հրաժեշտի խոսքում նշել է Մինյանոն:

ՀՖՖ նախագահ Արմեն Մելիքբեկյանը շնորհակալություն է հայտնել Ֆրանսիսկո Խավիեր Մինյանոյին կատարած աշխատանքի համար. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան իր խորին շնորհակալությունն է հայտնում Ֆրանսիսկո Խավիեր Մինյանոյին՝ Հայաստանի ազգային հավաքականում կատարած աշխատանքի համար: Պարոն Մինյանոն իր բարձր պրոֆեսիոնալիզմով, բազմամյա միջազգային փորձով եւ ժամանակակից մոտեցումներով մեծ ներդրում ունեցավ մեր ընտրանու ֆիզիկական պատրաստության զարգացման գործում: Այս տարիներին նրա աշխատանքն առանձնացավ բարձր պատասխանատվությամբ եւ ֆուտբոլիստների հնարավորությունների առավելագույն բացահայտմանն ուղղված մշտական ձգտմամբ: Իր մարդկային բարձր արժեքների, համագործակցության պատրաստակամության եւ դրական վերաբերմունքի շնորհիվ պարոն Մինյանոն արժանացավ հավաքականի ֆուտբոլիստների, մարզչական շտաբի եւ ֆեդերացիայի աշխատակիցների հարգանքին: Շնորհակալ եմ նրան նվիրված աշխատանքի, պրոֆեսիոնալ մոտեցման եւ հայկական ֆուտբոլի զարգացման գործում ունեցած ներդրման համար: Մաղթում եմ պարոն Մինյանոյին հաջողություններ հետագա գործունեությունում, նոր մասնագիտական ձեռքբերումներ եւ ամենայն բարիք»:

Մինյանոն Իսպանիայի ազգային հավաքականի հետ դարձել է աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն, իսկ Մադրիդի «Ռեալի» հետ երկու անգամ հաղթել է Չեմպիոնների լիգան:

● *Մարտի 12-ին՝ժամը 19:00-ին, Երգի պետական թատրոնում տեղի կունենա մեծ պրեմիերա՝ «Կապույտ մորուքը»:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ եթե կենսաթոշակառուն փոխում է բնակության վայրը, ապա ինչպե՞ս է վճարվում նրա կենսաթոշակը:

Աննա Ստեփանյան, 77 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Ա. Ստեփանյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ եթե կենսաթոշակառուն փոխում է բնակության վայրը, ապա պետք է գրավոր դիմի բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում: Բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը նախկին բնակության վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումից գրավոր պահանջում է կենսաթոշակի գործը եւ այն ստանալուց հետո շարունակում վճարել կենսաթոշակը: Կենսաթոշակ վճարելը վերսկսվում է կենսաթոշակառուի նախկին բնակության վայրում կենսաթոշակի վճարումը դադարեցնելու օրվանից:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավելացնենք, որ եթե կենսաթոշակ վճարելը դադարեցվել է, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու կամ կենսաթոշակ վճարելը վերսկսելու համար հիմք համարվող տեղեկատվությունը ստացվելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել: Ի դեպ, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է միանվագ:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ՝ ինչպիսի պարտականություններ ունեն ծառայողական քննության կողմերը:

Արամ Գուլոյան, 39 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ ծառայողական քննության կողմը պարտավոր է՝

ա) ծառայողական քննություն վարողի պահանջով ներկայանալ քննության կատարման վայր եւ տալ բացատրություններ (լրացուցիչ բացատրություններ), մասնակցել այլ անհրաժեշտ գործողությունների եւ ստորագրությամբ հաստատել դրանց կապակցությամբ կազմված արձանագրությունների (տեղեկանքների) ճշտությունը, իսկ չստորագրելու դեպքում՝ ներկայացնել գրավոր պատճառաբանություն,

բ) ծառայողական քննություն վարողի պահանջով ներկայացնել քննության համար անհրաժեշտ իր մոտ եղած առարկաները եւ փաստաթղթերը,

գ) ենթարկվել ծառայողական քննություն վարողի՝ ծառայողական քննություն անցկացնելու կարգով սահմանված պահանջներին:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ծառայողական քննության ընթացքում ծառայողական քննության կողմերն ունեն նաեւ իրավական ակտերով, ինչպես նաեւ ծառայողական քննություն անցկացնելու կարգով իրենց վերապահված այլ պարտականություններ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը համացանցից

Լիբանան. մեր օրեր...

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 8 - 12 0 + 4
	Կոտայքի լեռներ	- 8 - 11 0 + 4
	Կոտայքի նախալեռներ	- 1 - 4 + 4 + 7
	Գեղարքունիք	- 7 - 11 0 + 3
	Լոռի	- 2 - 5 + 3 + 7
	Տավուշ	0 - 4 + 3 + 8
	Արագածոտնի լեռներ	- 9 - 12 0 + 4
	Արագածոտնի նախալեռներ	- 2 - 6 + 3 + 7

	Արարատ	- 1 - 4 + 5 + 8
	Արմավիր	- 2 - 4 + 8 + 11
	Վայոց ձորի լեռներ	- 8 - 11 0 + 4
	Վայոց ձորի նախալեռներ	0 - 3 + 9 + 12
	Սյունիքի լեռներ	- 8 - 12 0 - 3
	Սյունիքի նախալեռներ	- 4 - 7 0 + 4
	Սյունիքի հովիտներ	0 + 4 + 8 + 11
	Երեւան	- 1 - 4 + 7 + 9

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.03.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ
չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային
հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը
պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս
կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել
հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ
«Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*